

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

2012թ. հունվար-հունիսին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 59987.7 մլն դրամ՝ 2011թ. հունվար-հունիսի 54447.3 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելածի տեմպը կազմել է 10.1 տոկոս, ինդեքս-դեֆլյատորը՝ 0.1 տոկոս: 2012թ. հունվար-հունիսին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 412.2 հազ. դրամ, 1043.6 ԱՄՆ դոլար կամ 804.7 Եվրո՝ 2011թ. հունվար-հունիսի 377.2 հազ. դրամի, 1019.1 ԱՄՆ դոլարի, 725.3 Եվրոյի դիմաց:

Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

	2011թ. հունվար- հունիս	2012թ. հունվար- հունիս	իրական հավելածի տեմպը (տոկոսներով)	/ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/	
				ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով)	
				2011թ. հունվար- հունիս	2012թ. հունվար- հունիս
Համախառն ներքին արդյունք	54447.3	59987.7	10.1	100.0	100.0
Ապրանքների արտադրություն այդ թվում՝	19862.7	20657.6	6.6	36.5	34.4
Արդյունաբերություն	9519.4	8664.5	-0.3	17.5	14.4
Անտառային տնտեսություն	76.7	65.9	-14.2	0.1	0.1
Գյուղատնտեսություն	4745.4	6261.4	25.8	8.7	10.4
Շինարարություն	5521.2	5665.8	2.2	10.2	9.5
Ծառայությունների արտադրություն այդ թվում՝	33484.2	38561.3	13.6	61.5	64.3
Շուկայական ծառայություններ որից՝	17020.4	20532.6	23.4	31.3	34.2
Տրանսպորտ և կապ	3852.6	4063.5	15.4	7.1	6.8
Առևտուր և հանրային սնունդ	3264.7	3605.6	9.9	6.0	6.0
Ոչ շուկայական ծառայություններ	16463.8	18028.7	3.5	30.2	30.1
Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններ (-)*	3092.9	4005.1	35.2	5.7	6.7
Ապրանքների և ներմուծման զուտ հարկեր	4193.3	4773.9	17.1	7.7	8.0

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 6.6 և 13.6 տոկոս:

ՀՆԱ-ի արձանագրված 10.1 տոկոս հավելածի տեմպի 4.7 տոկոսային կետն ապահովել է ֆինանսներ և վարկը, 2.2 տոկոսային կետը՝ գյուղատնտեսությունը, 1.1 տոկոսային կետը՝ կապը:

Կառուցվածքային տեսանկյունից՝ 2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ աճել է ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 2.8 տոկոսային կետով: Ի հակառակ դրա, 2.1 տոկոսային կետով նվազել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը:

* Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Զանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով: